

ՄՇԱԿ

Տարեկան գին 10 ռուբլ. կես տարվան 6 ռուբլ.:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից անկախ թերթեր:

Օտարապետացիք լինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունները ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարությունները համար վճարում են
խմբագրատնիքը ըստ 2 կոպեկի:

“ՄՇԱԿ” ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881

(ՏԵՄԵՐՈՐԻ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տոն և տոներին հե-
տևել օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱՆ. I. Տեղեկանք կարգադրություններ, II Առաջնորդող յոգուններ, III Ներ-
քին տեսություն, IV Արտաքին տեսություն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆեխետոն և
Բանասիրական, VIII Յայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ. կես տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ.,
երեք ամս. 3 ռ., երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ.:

Գրվել կարելի է խմբագրության մեջ հետևել հասցեով. Тифлиς, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՆԻ

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Պատմությունը դաս — Ներքին տեսու-
թիւնը, Նախկին Ալեքսանդրապոլից — Արտա-
քին տեսու-թիւնը, Թիֆլիս — Անգլիա —
Խառն լուրեր — Մշակու- հեռագիրներ —
Յայտարարություններ — Բանասիրական, Ներ-
կատողություններ:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԱՍ

Հենց որ մի միտք էք յայտ-
նում, — իսկոյն գտնվում են մար-
դիկ, որոնք վարդապետական
դիրքը ընդունելով սկսում են
ձեր գլխին քարոզներ կարդալ.
«մի համբալ, որ պատմութեան
այլքերը չը գիտէ, մի մանուկ որ
թոյլ է տալիս իրան հրապարա-
կապէս մտքերը յայտնել, խաղալ
հասարակական կարծիքի հետ»
աղաղակում են նրանք:

Հարցնող լինի, նրանք ի՞նչ
բան գիտեն, որ ուրիշներին տգի-

տութեան մէջ են մեղադրում:
Մի որ և իցէ թուկից փախած
տիրացու, ոչ մի տեղ ուսում չա-
ռած, ոչ մի տեղ ուսում չաւար-
տած, անկիրթ, տգէտ, անգար-
գացած, առանց որ և իցէ բա-
րոյական դաստիարակութեան,
ու բարոյական սկզբունքների, որ
բազմի բերմամբ մի որ և իցէ
դպրոցում պատմութեան ուսու-
ցիչ է դարձել, թուլթակի պէս,
անգիր առած, պատմութեան ի-
մաստը չը հասկացած տարինե-
րով պատմութեան կմախք է սո-
վորեցրել նոր սերունդին, առանց
պատմութեան երևոյթները որ և
է կրիտիկական հայեացքով, նոր
լուսով լուսաւորելու, — այդ տեսակ
մարդ յանդգնում է ուրիշների
մասին ասել թէ պատմու-
թիւնը չը գիտեն....

Այդ տեսակների համար պատ-
մութիւնը մի քարացած, ան-
շարժ, անկենդան ուսմունք է,
որին կարելի է միայն անգիր
անել ինչպէս տիրացուն անգիր
է անում սաղմոսը, առանց
նրա իմաստը հասկանալու: Բայց
հենց որ մարդը կենդանութիւն
է տալիս պատմական հում պա-
շարին, շունչ է փչում պատմա-
կան իրողութիւնների մէջ, կա-
մենում է որ պատմութիւնը ու-
սանելի լինի, պատմութեան ան-
ցեայը զգուշացնող դաս լինի
ազգի ներկայի և ապագայի հա-
մար, ըթամիտները իսկոյն աղա-
ղակում են. «դա պատմութիւն
չէ, դուք պատմութեան տարրա-
կան սկզբունքն էլ չը գիտէք»:

Ի հարկէ նրանց համար դա
պատմութիւն չէ, նրանց համար
պատմութիւնը նոյնքան ստրկա-
յին, անշարժութեանն ու մեռելու-
թեանը դատապարտված մի վար-
դապետութիւն է, որքան ստր-
կային է և իրանց սեփական հո-
գին....

Նրանք իրանց ձեռնարկում են
ազգային այդ կամ այն պրինցիպի
պաշտող, ազգային այս կամ այն
հաստատութեան պաշտպան, յան-
դգնում են մեզ հաւատացնել,
որ պատմական ամեն իրողութիւն
հասկացած, կշռած են, բայց ի-
րանք չեն նկատում որ հերքելով
պատմութեան կանոնաւոր, առա-
ջադէմ ընթացքը նրանք դրանով
հերքում են նոյն իսկ պատմու-
թիւնը, որին իրանց կարճ խել-
քով ամենախոր կերպով ուսում-
նասիրած են կարծում:

Այժմ խօսենք աւելի պարզ
կերպով:

Մենք սիրում ենք մեր եկե-
ղեցին, մենք համարում ենք նրան
ընդունակ վերանորոգվելու, առա-
ջադիմելու, ժամանակի բարոյա-
կան պահանջներին յարմարվելու,
ժամանակի ընթացքի հետ դնա-
լու: Մենք պատմութիւնը վկայ
ենք կանչում, որ այն հիմնար-
կութիւնը, որ կենսական ոյժեր
ունի իր մէջ, չը պէտք է դա-
տապարտված լինի մշտական,
յաւիտեական անշարժութեան:
Միայն դրա համար մենք պա-
հանում ենք որ այդ հիմնար-
կութիւնը ազատված լինի այն մի
քանի շահատէր, անազնիւ և
բռնաւոր ձեռքերից, որոնց մէջ
նա այս րոպէիս գտնվում է:

Դուք, ընդհակառակն, վերա-
ւորում էք, անարգում էք նոյն
հիմնարկութիւնը, որին կարծում
էք թէ մեծ ծառայութիւն էք
անում, անարգում էք, այո, որով-
հետեւ պաշտպան էք հանդիսա-
նում նրա անշարժութեան, դա-
տապարտում էք նրան մեռելու-
թեան, պատմութեան մասնագէտ
համարելով ձեզ, վերաւորում էք,
անարգում էք, հերքում էք մինչև
անգամ պատմութիւնը, կարծելով
որ պատմութիւնը անշա-
րժութիւնն է....

Մենք յարձակվելով մեր այս
կամ այն ազգային հիմնարկու-
թեան ժամանակակից պակասու-
թիւնների վրա, ընդունակ ենք
համարում նրան առաջադիմելու,
ուրեմն լաւ կարծիք ունենք նրա
մասին, հաւատացած ենք, որ

ԲԱՆԱԳՐԱԿԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տխուր անցեալ և փառաւոր ապագայ — Էջ-
միածնի ճեմարանը, որպէս լուսաւորութեան
աղբիւր: — Հայ գիտնականները և նրանց գրուածք-
ները: — Հայ մամուլի գործունէութիւնը:

Շատերը գնահատում են, որ հայերը չեն
տալիս գիտութեանը նշանաւոր գործողներ, որ
նրանք ընդունակ չեն համամարդկային մարքը
բարոյելու, լուսաւոր աշխարհի մոտաւոր շարժողու-
թեանը նպաստելու: Այդ գնահատան իրաւացի է
անցեալի և ներկայի վերաբերութեամբ. դրա
դէմ անկարելի է հակադասել: Բայց մի քանի
պայծառ երևոյթներ մեր հասարակական կեանքի
մէջ խոտանում են մեզ այնպիսի փառաւոր ա-
պագայ, որ ամբողջ մարդկութիւնը շատ շուտ
կը փոխէ իր սխալ կարծիքը մեր ազգի ընդու-
նակութիւնների վրա և խորին չնորակաւու-
թեամբ կը բազմացնի պատմութեան էջերում մեր
ազգակից գիտնականների անունները:

Ընթերցողին, ինչ կարծիք, կը զարմացնի այս
հանելուկը.... Ի՞նչ է պատահել յանկարծ — կը
մտածի նա: Մահաւեր թաթոս ու գիտութիւն,
տիրացու. Նազար ու պատմութիւն, — այդ ինչ
խելք կտրելու բան է... Ձեր կամքն է, պարոն-
ներ, կուզէք հաւատացնել, կուզէք ոչ, միայն են
հանաք անելու (հաւատ) չունենա: Ես հիմնում եմ
իմ կարծիքս իրական փաստերի վրա. երևակա-
յական աշխարհում կանխաններ անել հեռու է
իմ բնութիւնից: Եթէ ուզում էք, ես մի առ մի
կը ներկայացնեմ ձեզ այն երևոյթները, որոնք
իրաւունք են տալիս ինձ գուցէ փոքր ինչ հա-
մարձակ եղբակացութիւն անելու:

Մեզ ուրախացող, ցնծացող, հիացող ու
չլացող ամենամիտքաւոր երևոյթն այն է,
որ Էջմիածնի ճեմարանում բացվել է առաջին
գրադարանը... Այս գրադարանում մի եպիսկոպո-
սից, երեք վարդապետից, մի տարկաւագից և մի
քանի աշխարհականից բաղկացած ուսուցչական
խմբից (արժանաւորագոյները պէտք է ձեռնաց,
թաթարեանի պրոֆեսոր ձեռնադրվեն ու եր-
կար ու ձիգ բազմելով կաֆէդրաների վրա պէտք
է զարմացնեն ու ապացնեն տիրացու ուսանող-
ներին իրանց անմահական բերանից թափած

լուսեղէն ճշմարտութիւններով... Կանցնի երեք
տարի և ճեմարանի սաները կրթված ու պատ-
րաստված կը մտնեն հասարակական կեանքի
մէջ ու լուսավորութիւն ձեռքերով կը վառեն
ազգի խաւար մոտաւոր հորիզոնի վրա պայծա-
ռափայլ կանթիւղներ... Չմայլի ազգ, քո փրկու-
թիւնը մօտ է! Բո մոտաւոր և բարոյական վերա-
ծնութիւնը տիրացուների ձեռքով պէտք է լինի:
Մի խնայէք, ուրեմն, հայեր, զոհելու ճեմարանի
արտաքին տեսքը չբեղացնելու համար: Նկրքինը
ձեր գործը չէ: Ձը համարձակվէք երբեք հետա-
քրքրվելու կամ Աստուած աղաւթի — հարցնելու
թէ ինչպէս են գործ զրկում ձեր նուիրած գու-
մարները, արժանաւոր են արդեօք պ. պ. պրո-
ֆեսորները, ինչ ուղղութիւն են տալիս նրանք
իրանց սաներին և այլն, և այլն: Այդ յիմար
սովորութիւն է: Կուգեն, — տուր, պրծաւ գնաց,
էլ գլխացաւանք հարկաւոր չէ: Ձոհեցէք մանա-
ւանդ ննջարանի համար, որ մեր ապագայ տի-
րացու փրկիչները քանի մէջ երազին, որ
ազգը նրանց վրա է դրել իր միակ յոյրը...

Գնաք դէպի միւս (այսօր) երևոյթները
Ասում են, որ մեր հոշակաւոր հայրենակից
փրկիչայութեան doctor B — ianz պատրաս-
է՛ չը խնայել, Բամբասիր որքան կարող ես

տում է իր մասնագիտութեան վերաբերեալ մի
գրուածք, որ նոր լոյս կը թափի սոցիոլոգիայի
և հոգեբանութեան մի քանի միջին կետերի վրա:
Գրքի վերնագիրն է՝ Հայոցանքների, տների,
իշդոցների, բամբասանքների և ծայրայեղ անաժո-
թութեան նշանակութիւնը հասարակական գոր-
ծունէութեան մէջ վերացական փրկիչայութե-
ան տեսակէտից: Առաջին երեսում գրված կը
լինի ռուսերէն էպիգրաֆ՝ «Плюй въ глаза, —
Вожья роса» Գիրքը, ասում են, նուիրված կը
լինի երեւելի պուրիլիստ Տ — ianz-ին հետեւել
յառաջարկանով: Պատուելի համարի! Իմ ստա-
ցած կրթութիւնը եւրոպական քաղաքների ան-
թիւ ու անհամար արակոյրներում գինեանե-
րում և հրապարակներում հիւնալի կերպով հա-
մապատասխանում է այն ուղղութեամբ, որ դուք
ընդունել էք ձեր հասարակական գործունէու-
թեան մէջ: Ձեր և իմ մէջ կայ մի զարմանալի
հոգեկան բարեկամութիւն:

«Մի կէտում միայն մենք փոքր ինչ համաձայն
չենք»:

Երբ ձեր գրուածքների մէջ թէ և հայոցում
էք, բամբասում էք, ստոր էք փչում, բայց մեղ-
մութեամբ ևս այդպէս չեմ կարող — իմ զեմվոյն
է՛ չը խնայել, Բամբասիր որքան կարող ես

եթէ նա ուզենայ, կարող է վերանորոգել, ճանաչում ենք նրա մէջ կենսական անսպառելի ոյժերը: Դուք պաշտպանելով նոյն հիմնարկութիւնը, ազդակներ երբ նրա պակասութիւններն են ցոյց տալիս, երբ պահանջում են նրա վերանորոգութիւնները, իսկապէս ամենամանրագէտ կերպով անարգում էք այդ ձեր պաշտպանած հաստատութիւնը, անընդունակ համարելով նրան առաջադիմելու:

Եթէ մի հիմնարկութիւնը լաւ է, օրինաւոր է, արդար, ճշմարիտ, կենսատու սկզբունքների վրա է հիմնված, նա չբախտէ վախճանայ առաջադիմութիւնից: Միայն անարգար, փաստակար, հրեշաւոր սկզբունքների վրա կայացած հաստատութիւնները լոյսի և վերանորոգութեան տակ իսկոյն քայքայվում են...

Ով աւելի լաւ գիտէ պատմութիւնը՝ դուք թէ մենք:

Մենք սիրում ենք մեր ազգը, դուք էլ կարծում էք թէ սիրում էք նրան: Բայց մենք յարգում ենք մեր ազգը, իսկ դուք նրան անարգում էք: Ահա ինչպէս:

Մենք այնքան հաւատ ունենք ղեպի հայի առողջ դատողութիւնը, ղեպի հայի մտաւոր ընդունակութիւնները, ղեպի նրա անուութիւնը, որ հաւատացած ենք, թէ կը գայ մի ժամանակ, երբ հայ լուսաւորչականը հայ կը համարի ամեն հային, ինչ կրօնին և պատկանէր նա, հաւատացած ենք, որ հայ-բողոքականը, հայ-կաթօլիկը, հայ-մահմետականը մի ժամանակ այլ ևս չեն խորշի հայութիւնից, այլ ևս չեն լինի մոլեւանդ, թէև պինդ կերպով կը պահեն իրանց կրօնը, բայց հայ կը համարեն իրանց և ոչ թէ փրանկ, նեմէց, թիւրք կամ քիւրդ... Իսկ դուք այնքան քիչ էք յարգում ձեր ազգութիւնը, որ չէք կամենում հաւատալ

որ հայը որ և է ժամանակ իրան հայ կը համարի...

Մեզանից ով է աւելի սիրում իր ազգութիւնը:

Չեր պատմութիւնը հիմնված է ժողովրդի նախապաշարմունքի, անցեալ փաստերի անխնայ կուտակութեան և ժողովրդի խաւարչին աւանդութեան վրա: Մեր պատմութիւնը հիմնված է ընդհանուր մարդկային հասարակական գիտութիւնների անկողմնապահ ուսումնասիրութեան վրա:

Մենք հաւատում ենք ապագային, որովհետև ճանաչում ենք թէ մեր և թէ ուրիշ ազգերի անցեալն ու ներկան: Դուք հերքում էք ապագան, որովհետև կամենում էք որ անցեալը պահպանուի ներկայում, իսկ ներկայի առաջադեմ շարժման երեսին աւելծք էք կարդում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՏ

Նոյեմբերի 25-ին

Ինչպէս երևում է Ալեքսանդրապոլի կրկին վերգովելու է և այդ էլ կրկին շուրջի տեղափոխութեան: Ի հարկէ այստեղի ժողովուրդը գրկված է այն բազմից և բաւականութեամբ, որ ունենում է մի հասարակութիւն, երբ նրա հոգեւոր ազգային գործող գործի և առաջնորդ դասակարգ են եղանակը, խոհմի և փոստ ձգտումներն ունեցող անձինք, որոնցից ժողովուրդը օրինակ առնել, պատկառի և լարի ու օգտակար առաջադիմութեանը համար միշտ պատրաստակաւ լինի: Իսկ թէ ինչպիսի մարդիկ են եղել այս մի քանի տարվայ ընթացքում մեր հոգեւոր գործող ղեկավարները, այդ մասին աւելորդ եմ համարում խօսել, բաւականաչափ գրած են և դեռ գրելու են ուրիշները: Նրանք մի այնպիսի հակապատկեր են ներկայացնում, որ մարդ, ինչի ի նկատի չունենայ ժողովրդի միջև առողջ տարբերը և խոհմի անձինքներին, յուսահատութեան դիմելու է: Բայց ոչ, աւելի լաւ է հրապարակ հանենք ազգի և հասարակութեանց վերքերը, որ կամ բուժվելու հարկ է պահանջում, կամ թէ երկնքից կոչված բոլորիս ձեռքից ընդ միշտ ազատվենք և այդպիսի վերքեր ստանալուց ազատ մնանք:

Խօսքս այս անգամ լինելու է այնպիսի մի նիւթի վրա, որ շատ ծանրակշիւ է թէ Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցի համար և թէ իր ստացած ուղղութեամբ և հետևանքներով:

Ալեքսան հայոց կաթոլիկոս Գեորգ Գ-ի հաստատած կանոնադրութեան հիման վրա Ալեքսանդրապոլի մոմսվածառութեան արդիւնքը վիճակային դպրոցին է պատկանում, բայց հասարակութեան խնդրանքը գործ էր դրվում նախապես Ամենափրկիչ եկեղեցւոյ շինութեան վրա: Այդ եկեղեցին աւարտելուց յետոյ, արդիւնքը անմիջապէս դառնալու էր վիճակային դպրոցին: Բայց ինչպէս է եղել, հոգաբարձութեան թուլութիւնից կամ ուրիշ պատճառից այդ արդիւնքը հաւաքվում է եղել Աստուածածին եկեղեցւոյ երեսփոխանի ձեռքում և մինչ վերջին ժամանակները քսան հազարից աւելի գումար էր ներկայացնում: Բայց երբ վիճակային դպրոցի ներկայ հոգաբարձութիւնը հարց բարձրացրեց այդ մասին նախ անք լինելու դպրոցի այդ իրաւացի արդիւնքին և երկրորդ՝ կարող լինելու դպրոցի համար մի նոր շինութիւն կառուցանելու, խնդրագրով դիմեց կաթոլիկոսին, որ հրամայէ մոմսվածառութեան արդիւնքը դպրոցին դարձնելու:

Կաթոլիկոսին էլ իսկոյն մակագրած, կարծեմ դեկտ. 28-ին և յանձնած է եղել Սինոդին ի գործադրութիւն: Սինոդը չը գիտէր որի չը նորիս այդպիսի կարեւոր գործի մասին հազիւ մայիսին է տեղեկութիւն տալիս հոգեւոր կառավարութեանը և հոգաբարձութեանը, հաղորդելով կաթոլիկոսի մակագրութիւնը բառացի, որ պատուիրում էր ստանալ մոմսվածառութեան արդիւնքը և ձեռնարկել դպրոցի համար նոր շինութեան: Ասել է, առաջին անգամ, Եւթիմիոս ինչպէս և վաղեմէ էր իր արդարացի կարգադրութիւնը արել էր:

Վիճակային դպրոցի հոգաբարձութիւնը վախճանաբար յուսալով, թէ չուտով կաթոլիկոսին և Սինոդի հրամանագրութեան հիման վրա կըստանայ մոմսվածառութեան իրաւունքը և, ժամանակ չը կորցնելու համար, ձեռնարկում է շինութեանը, ծախս է անում իր մարդ գումարը, մինչդեռ մինչև այսօր դեռ ոչինչ է ստացել ոչ մոմսվածառութեան իրաւունքը և ոչ փող: Ինչու: Որովհետև տեղիս հոգեւոր կառավարութիւնը իր տղէտ ու գոհնիկ կողմէն, չափանդի ու ոչ մի լաւ գործի ընդունակ չեղող անդամների (խօսքս ընտրութիւն չունեցող փոխնորդին չէ վերաբերում) և նրանց քանակում կանգնած, այժմ միայն դիւանակ ձգտումներն ունեցող անձինք, գործը խնձում են և յետագում, մի եկեղեցի շինելու են ձեռնարկում մոմսվածառութիւնից ստացած գումարով և աշխատում են մոմսվածառութեան ապագայ արդիւնքն էլ այդ շինութեան վրա գործածելու իրաւունք ստանալ և այն: (Եկեղեցւոյ շինութեան պատմութիւնը թող ուրիշները մանրամասն գրեն):

Այս բոլորը դեռ բաւական չէր, տեղափոխվում էր Սինոդի դպրոցի հոգաբարձութեանը յայտնել է, նոյնը լսել ենք և ուրիշ հաստատ արդիւնքի, որ Սինոդը և կաթոլիկոսը վճռել են, կամ վճռելու են Ալեքսանդրապոլի մոմսվածառութեան արդիւնքը միացնել Կարսի մոմսվածառութեան արդեանց հետ և բոլոր եկամուտը երեք բաժին անել, մինչ Կարսի ուսումնարանին, մինչ Ալեքսանդրապոլի վիճ. դպրոցին և երրորդը Եւթիմիոսի ձեռնարանին:

Առ քեզ տարածոց: Ուրեմն ինչ է դուրս գալու վերջի վերջոյ:

1. Ամենայն հայոց կաթոլիկոսը դեռ իր կենդանութեան ժամանակ մի քանի շահանդիւններ չի շնորհիւ իր հաստատած կանոնադրութիւնը կրկին խափանում է:

2. Նոյն կաթոլիկոսի մակագրութիւնը անցեալ գեղեցիկներին և Սինոդի հրամանը կրկին ոչինչ համարվելու են այստեղի հոգեւոր կառավարութեան դիւանակ խորհրդի համաձայն: Ուրեմն լաւ չէր լինի, որ կաթոլիկոսը և Սինոդը, չը նայելով իրանց իրաւանց և բոլոր ձեռքի տակ ունեցած տեղեկութեանց, կրկին և նախապէս խորհրդի հարցէն այստեղից և յետոյ վերջին կայացնէին, թէ լաւ սովորեցան այս մի քանի տարուայ ընթացքում այստեղի հոգեւոր կառավարութեան և նրանց իսկական ղեկավար աշխարհաշուկ տէր Գովսէփի ձեռքին խաղաղիկ դառնալ:

3. Ալեքսանդրապոլի վիճ. դպրոցը բայց աչքով տեսնելով իրան հասանելի քսան հազար ռուբլին հոգեւոր կառավարութեան հակողութեան ներքոյ հաղելով, այժմ ևս անկարող պէտք է լինի մոմսվածառութեան արդիւնքը ամբողջապէս ստանալ:

4. Այդ բազմից էլ զրկվելով, այժմ իր իրաւացի արդեանց միայն մի մասը պէտք է ստանալ:

5. Իսկ արդեանց մի մասը ուրիշ քաղաք (Կարս) է ուղարկելու, և

6. Արդեանց մի գլխի մասն էլ Եւթիմիոսի ձեռնարանին է սեպհականացնելու:

Սինոդի պտուղները, որ տալու են Ալեքսանդրապոլի հասարակութեան բարեկամ ձեռնող հոգեւոր կառավարութեան խաղաղութիւնները, որով ոչ միայն դպրոցի հոգաբարձութեան, որի հետ և ամբողջ հասարակութեան յոյսերը խաղում են, ոչ միայն դպրոցը զրկում են արդիւնքից, այլ և այդ արդեանց մի մասը ձգում են Եւթիմիոսի անդադ երեսնը, որ իրանց ուրիշ հաղար ու մէկ անպիտանութիւնները ներողամտութեամբ ծածկվին կամ կատարվեն: Այս դեռ բաւական չէ:

Եւթիմիոսին էլ բոլորովին խցի հանդարտութեամբ ձեռք է երկարացնում մի բան խելու ձեռնարանի համար, կարծես այս բազմապի վիճակի դեռ բազմակարգ տարրերը մի թուրքի մէջ թխել լինի:

Ով հրապարակ, ինչպէս մի երկու տարում դեռ իր փոխում են. այն ինչ Եւթիմիոսը յարձակվում էր նախկին հոգաբարձութեան վրա, որ դպրոցի շահերը չէ պաշտպանում, այժմ երբ ներկայ հոգաբարձութիւնը դպրոցի շահերը պաշտպանելու է ձգտում, նոյն իսկ Եւթիմիոսը նորան արդեւ է դառնում: Վայ քեզ ազգ, վայ քեզ Ալեքսանդրապոլի հասարակութեան:

Այս բոլորը յիշուց յետոյ, մնում է մի ակնարկի ձգել Ալեքսանդրապոլի հասարակութեան վրա, որ այս երեք տարին խաղաղացած ջրի նման է, որ հարկւեւոր ժամանակ իր ալիքները բարձրացնելու պատրաստ է արդար գործի համար և նշանները ստին կողմ արդէն երևում են: Եւթիմիոսը քաջալերվեցաւ Սաքիաս եպիսկոպոսի և տէր-Գովսէփի մէջ ըստ երեսնութիւն յաղթող հանդիսանալով: Գաղթութեան մասին պէտք է

ընթացք: Հայնոյն ինչքան կարող ես ցնիկաբար, յիշողներ տուր այնպէս խտտութեամբ, որ հակառակորդը էլ չը համարձակվի հետոյ խօսելու: Դուք մի վատ սովորութիւն էլ ունեք՝ ձեր հակառակորդների համոզմունքներին ընդդիմադրում էք ձեր սեպհական համոզմունքները: Իմ կարծիքով դա բոլորովին ի դուր է: Չեղից համոզմունք կը պահանջեն, դուք արշնր վերջերս և այդ պահանջողի պոօն ու քիթը չափեցէք, կամ հեռուից փայտով սպառնացէք, — Էլ դալթի կանի, անտեղի պահանջներով դա՛ւա չի տանի: Եւ կը հեռանայ չը ցանկանալով ձեզ հետ գործ ունենալ, բայց դուք չարունակեցէք հայնոյն նրան այնքան, որ համը տանէք... Լապթիք դրանում է... Ինչ ուզում են թող ասեն, — դուք էլ չը քիչ: Եւ այստեղ բացատրենք իմ համոզմունքները կարծաւոր կերպով, իսկ մանրամասնութիւնները դուք կը գտնէք գրքիս մէջ, որ իբրեւ նշան խորին յարգութեան թող տուէք նուիրել ձեզ:

Ասում են նոյնպէս, որ մի հայ լրագրի խմբագրութիւն իր բոլոր աշխատակիցների օգնութեամբ պատրաստում է մի նշանաւոր գրութիւն, որ մեծ յեղափոխութիւններ կանի բոլոր գի-

տութիւնների մէջ: Գրքի վերնագիրն է՝ «Յետադիմութիւնը և տգիտութիւնը որպէս հիմունք մտաւոր և բարոյական զարգացման»: Գրքը, ասում են, նուիրված կը լինի պ. Կատիլովին, իսկ հրատարակութեան բոլոր ծախսը յանձն են առել հայկական Водиченский և Добчинский Տէր-Ղազարեանց՝ Ղազարեանց: Գրքը կարելի կը լինի տառալ խուսափանալով յիշեալ լրագրի թղթակիցների մօտ, իսկ Էլ-բաղայում աստիական կոնսուլների մօտ: Մոռացայ սակ, որ գրքի առաջին երեսում գրված կը լինի էպիգրաֆ ուսուցիչ՝ «Нечтение свѣтъ, учение тьма»:

Լսվում է, որ մի հայ ամսագրի խմբագրութիւն պատրաստում է առաջիկայ 1881 թիւին դուրս թողնելու մի ընդարձակ գրութիւն, որի վերնագիրն է՝ «Իդէալական և կատարեալ ամսագրի պայմանները»: Գրքի առաջին երեսում գրված կը լինեն հիմնական տեղիքները, որոնց մանրամասն բացատրութիւնը կը կազմէ գրքի բովանդակութիւնը: Ահա այդ տեղիքները:

- 1) Չունենալ ոչ մի ուղղութիւն:
- 2) Ազգային նշանաւոր հարցերում կամ պատմական ջաբարիայի պէս, կամ բաւականաչափ մի երկու աննշան խօսքով:

3) Պահպանել չէ՞ղքը գիրք ամեն մի կենսական հարցերի վերաբերեալ պոլեմիկ ժամանակ:

4) «Խաթիւրէն» գեղեցիկ ամսագրի մէջ ամեն մի ցնորաբանութիւն, որի հեղինակը իր բանաստեղծական քնարով կաշխատի Նախ խմբագրի տանը անուշ արած տօշման կամ կօշմած մա՜սաբը:

5) Կերակրել ընկերոջդ զինքին, քանիցս դա անպիտանութիւններով, թէ՛ խաղաղամտական և թէ՛ ինքնուրոյն: Եւ լսվում է մի քանի նմանապիւստի:

6) Լցնել ամսագրի էջերը անգլուստ ու անվերջ ճանապարհորդութիւններով, որպէս վերնագրով, օրինակ՝ Սօլուսից մինչև Նախլուդ, Նախլուդից մինչև Կօջոր, Կօջորից մինչև Մաւիս, ժայրը՝ Մաւիսի ծայրից մինչև Չրհանման տակը:

7) Չը պատասխանել ոչ մի նամակի, որ տուտցվում է խմբագրատանը: Եթէ մինչև անգամ մի և նոյն անձը ճիշդ անգամ կը գրի նամակ և ամեն անգամ պատասխանի համար մարկա կուղարկի, — դարձեալ չը պատասխանել: Մարկաները պահել իր մօտ խմբագրատան գումարի վրա աւելացնելով:

8) Ամսագրի խմբագիրը կարող է ինքը ոչինչ չը գրել: Անունը կայ հերիք է էլի:

Լսվում է նոյնպէս, որ Սուլէյման եկեղեցւորացւո ջաղութաղ տիրացուն պատրաստում է վիճակական հիմնարկութիւններին մասին մի դիտարկագիր:

Յառաջաբանում ընդարձակ դատողութեան մէջ յայտնված կը լինի այն միայն, թէ՛ եկեղեցականը պէտք է լինի մի և նոյն ժամանակ հոգեւոր և մարմնաւոր բժիշկ:

Բացի այս գրութիւններից, որոնք ունեն գիտական, համայնարարային նշանակութիւն, «Արաբալուի» խմբագրութիւնը, ասում են, պատրաստում է մի շարադրութիւն, որ կունենայ միայն նեղ ազգային նշանակութիւն: Գրքի վերնագիրն է՝ «Թէ գրքիս ինչ արար Ս. Աթոռն Եւթիմիոսին յաղագս տառապելաւ և փոխեց որ ի Տաճկաստան և թէ՛ որպիսի անձամբ ջանք են թափելու ի նման վասն շարադրութեան խնդրոյն հայկական որ ի կոտանալուց փոխաւ ջրոյնս որ լաւագործ Գրքը, ասում են, նուիրված կը լինի Վահրամ եպիսկոպոս Մանուկեանի ղեկավարութեամբ գրված խմբագրութեանը:

միայն չնորմալ կ'ընէ պատերազմին. բացառե-
լու հարկ չը կայ: Բայց այժմ այդ բոլորը ան-
ցած է և ժողովուրդը ու նրանց առաջադրու-
հակում են ամեն բանի վրա և ամբողջ հասարա-
կութիւնը այժմ մի բանի մէջ համոզված է լի-
վին, որ էջմիածինը նրանց վրա նայում է միայն
իրեն մի առատ կաթնատու կովի վրա, իսկ հա-
սարակութեան խօսքը, իր ներկայացուցիչների
երեկոյն խնդրքը, իր ընդհանուրին վերաբերի-
չանքը ի նկատի չառնել իրան սովորական է
չինել: Իսկ էջմիածինը այսպիսի ջերմանայի ժո-
ղովրդի վրա տարած իր յայտութեանը և նրանց
բարոյական հետաքննչների մասին թող չնորս ա-
նէ հարցնելու հակամարտութեանը պիտի ծառայու-
ղոյն հոգեւոր իշխանութեանը պիտի ծառայու-
թիւն անող հոգեւոր կառավարութեան անդամ-
ներին:

Աւրաբ

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՒԹԻՒՆ

Լօնդոնի «Daily News» լրագրին հե-
ռագրում են, որ երկրաչափների միջազգա-
յին մասնագիտողը Զեմինիէի մէջ, որ կազ-
մված էր ուսուց, անգլիական և իտալական
հաւատարմատարներից, վճռեց, որ Սան-
Ջորջի ամրոցը պէտք է թիւրքիային մնայ:
Չեքոսլովակիական զորքերի գլխաւոր հրամա-
նատար Բոժո Պետրովիչ իր զորքերի գլխա-
ւոր բաժնի հետ վերադարձաւ Զեմինիէ:
Չեքոսլովակիայի սահմանների վրա բնակվող
ալբանական մի քանի ցեղեր պատրաստվել
էին չեքոսլովակիական իշխանին մի պատգա-
մաւորութիւն ուղարկել իրանց հնազան-
դութիւնը և հաւատարմութիւնը իշխա-
նին յայտնելու համար: Իշխան Նիկոլայ
հրաժարվեցաւ ընդունել պատգամաւորնե-
րին, ասելով, որ ալբանական այդ ցեղերը
թիւրքիապաշտաններ են, ուրեմն իրաւունք
չունեն իրանց երկիրը ուրիշ պետութեան
յանձնել:

Լօնդոնի «Standard» լրագրին հեռագ-
րում են Կ. Պոլսից, որ յունական ղեկաւ-
նատանը յայտնի է, իբր թէ Բ. Վուռը ա-
ռաջարկութիւններ է արել պետութիւննե-
րին մի քանի անվճիւ հարցերը վերջաց-
նելու մասին: Կոնստանդնուպոլսի յայտնել է, որ
յունական ժողովրդի համբերութիւնը հա-
տել է և որ այժմ դժուար է նրան զսպել:
Ասում են, որ ազդեցութիւն ունեցող մեծ
պետութիւններից մի քանիսը աշխատում
են յոյն-թիւրքական պատերազմի առաջն
առնել:

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին
հաղորդում են, որ թէպէտ Կերկիր-փաշա
աջորդութեամբ վերջացրեց իր յանձնարա-
րութիւնը, բայց այնու ամենայնիւ նա իր
զօրքերով դեռ էլի մի քանի ժամանակ էլ
մնայ Սկուտարիի մէջ: Ալբանիները ձեռ-
վայ պաշարներ են պատրաստել և գնացել
են իրանց անիւրը: Կեռ ևս վճռված է, թէ
միջազգային մասնագիտողը երբ պէտք է

ներ են հրատարակված, որպէս զի կառա-
վարութեան դէմ գնահատան ցոյցեր չանվին:
Երբեք համար, մահուան պատժի կեն-
թարկի իւրաքանչիւր մարդ, որ կը փորձի
սպանել սուլթանին, կամ մի ուրիշին կը-
դրի այդ յանցանքը կատարելու համար:
Նա, որ թշնամական ցոյցեր կանի սուլ-
թանի դէմ, կենթարկվի տաժանակիր աշ-
խատանքների ամբողջ կեսնը:

Այս կարգադրութիւններից երեւում է,
որ Բ. Վուռը երկիւղ է կրում իր վերջին
քաղաքականութեան պատճառով և միջոց-
ներ է գործ դնում անկարգութիւնների ա-
ռաջն առնելու համար: Կրանով է մեկն-
վում այն հանգամանքը, որ ժամանակ առ
ժամանակ խիստ կարգադրութիւններ և
հրամաններ են հրատարակվում: Կոնստա-
նուպոլսի վարչութիւնը հրաման ստացաւ բռնել
և ուղարկել Փոքր-Ասիա մօտ 140 բոլա-
րացի ընտանիքներ, որովհետեւ նրանք զը-
րազրութիւն ունէին բոլգարական իշխա-
նութեան մէջ բնակվող իրանց բարեկամ
ների հետ: Բոլգարական եպիսկոպոսը բո-
լոքեց այդ կարգադրութեան դէմ, բայց
այդ բոլորը ոչինչ հետեւեցին չունե-
ցաւ:

Թիւրքիան շարունակում է գիտնորդել
զաղանի կերպով: Հազարաւոր գիտնորներ
են գալիս Կ. Պոլիս և շտապով գէնքեր
ստանալուց յետոյ ուղևորվում են դէպի
յունական սահմանները: «Թէրջըմանի-շա-
կիլիթ» լրագիրը յայտնում է, որ, և թէ
թիւրք-յունական պատերազմ սկսվի, Բու-
նատանի հպատակ բոլոր յոյները կար-
տաքվին թիւրքիայից: Լրագիրը ասում է,
որ զրանց թիւը հասնում է 500,000:
Միայն Կ. Պոլսի մէջ 30,000 յունահա-
տակ յոյներ են բնակվում: Կարելի է ասել,
որ թշնամական զործողութիւնները գրե-
թէ սկսված են: Նորերում թիւրքաց նա-
ւահանգստի հրամանատարը Կ. Պոլսի մէջ
կայանաւորեց յունական մի նաւ, որ վա-
ռօցով էր բեռնաւորված: Նախ հրամա-
նատարը պնդում է, որ նա այդ վառօդը
ընդունել է իտալական մի նաւից Սիրա-
հասցեյու համար, բայց թիւրքերը կա-
կածում են, որ վառօդը պէտք է զաղանի
կերպով Կ. Պոլիս բերվեր: Թէպէտ յունա-
կան կառավարութիւնը բողոքել է այդ
գործի դէմ, բայց նա դեռ ևս բաւականութե-
ն թիւն է ստացել:

Կ. Պոլսի յոյն բնակիչների մէջ ձեռք է
անցնում մի նամակ, որտեղ պատմվում է,
թէ գերմանական ղեկաւոր Ալէէքի մէջ
համոզում էր յունական կառավարութեան
նախագահ Կոնստանդնուպոլսի պատերազմից
զգուշանալ և երբ այս վերջինը յայտնեց,
որ այդ անկարելի է, ղեկաւորը նկատել է,
ուրեմն լաւ պատրաստվեցէք:

ԱՆՎԻԼԻԱ

Լրագիրները հաղորդում են գերմանների
2-ից հետեւեալը: Երանդական զորքերի
գրութիւնը, ինչպէս երեւում է, մինչ այն
աստիճան վատացել է, որ կառավարու-
թիւնը ստիպված է իր նախկին վճիռ
հակառակ, զիմել բացառական օրէնքների
գործադրութեանը: Այսօր անսպասելի կեր-
պով միմիստների խորհուրդի արտաքոյ
կարգի նիստ պէտք է լինի:
«Standard» լրագիրը, որ վերջին ժա-
մանակները իրականական գործերի վերա-
բերութեամբ կատարելապէս ձեռք տեղե-
կութիւններ էր հաղորդում, այժմ հաւա-
տացնում է, որ Երանդիայի միմիստ-բար-
տաւար պ. Ֆորստեր անկարելի է համա-
րում վարել այսուհետեւ իր պաշտօնը, ե-
թէ նրան բացատական իրաւունքներ չը
տրվին: Նոյն լրագրի տեղեկութիւնները
համեմատ, միմիստութիւնը այսօր չափա-
կանց նշանաւոր վճիռ պէտք է կայացնէ և
կարող է պատահել, որ պարլամենտը նշա-

նակված ժամանակից առաջ կը գումարվի:
Կեռ ևս յայտնի է, թէ ի՞նչն է առիթ
տուել այդ անհանգստութիւններին: Եր-
անդական զորքերի գրութիւնը վերջին
ժամանակներում շատ լաւ էր, բայց նրա
վատթար դրութիւնը երեկվանից չըսկո-
վեց: Արգէն երկու ամիսից աւելի է, որ այդ
կղզու արեւմտեան մասը ժողովուրդը գրգը-
ռող մարդիկանց ձեռքին է և զիւղական
ազդարնակութիւնը կատարի ընդգիմադ-
րութիւն է ցոյց տալիս, նորեկն անգլիա-
յի կայունաժողովրդին: Անգլիական բազ-
մաթիւ զորքաւորները շրջում են երկրի
մէջ և երեւում են ամեն տեղ, երբ անհ-
րաժեշտ է լինում պաշտպանել կայունա-
ժողովրդին, կամ նրանց գործակատարնե-
րին: Ամեն օր կայունաժական յանցանքներ
են պատահում և երկրի մէջ սարսափ է
տիրել:

Այնուամենայնիւ այս գործերը նոր չեն
պատահում, այլ դեռ այն ժամանակից,
երբ Կալաթոնի միմիստութիւնը վճռեց
չը հրաւիրել պարլամենտը յունարի 6-ից
առաջ: Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ մի-
միստը Թորստեր այժմ է բարձրացնում իր
հրաժարականի հարցը:

Եթէ «Standard» լրագրի տեղեկու-
թիւնները ճիշդ են, թէ Թորստեր և թէ
անգլիական միւս միմիստները նկատել են,
որ ազատամիտ կուսակցութեան մեծա-
մասնութիւնը անբաւական է կառավարու-
թեան անդործութիւնից իրականական հար-
ցի վերաբերութեամբ և երկիւղ են կրում,
որ մինչև պարլամենտի հաւաքվելը այդ
անբաւականութիւնը կարող է սաստկանալ
և ազատամիտ կուսակցութեան մէջ տե-
միարանութեան ծագելու պատճառ դառ-
նալ: Եթէ պարլամենտը այժմ հաւաքվի
և կառավարութիւնը պահանջէ նրանից
«Habeas corpus» օրէնքի ժամանակաւոր
զաղարկումը, զուգէ դրանով այդ անմիա-
բանութեան առաջն առնվի և պահպանվի
պարլամենտի մէջ ազատամիտ կուսակցու-
թեան մեծամասնութիւնը:

Նախ հաւանական է, որ կառավարու-
թիւնը պարլամենտից միաժամանակ պա-
հանջում է ոչ թէ միայն բացառական
իրաւունքներ, այլ և կայունաժական վերա-
նորոգութիւններ: Այդպիսով կառավարու-
թիւնը կապացուցանի իրանդացիներին, որ
նա, անհրաժեշտ համարելով իրանդացի-
ների երկրագործական գրութեան բարւո-
քումը, մի և նոյն ժամանակ հաստատ վրձ-
նել է ոչ թէ գործ գնել վրձոված երկրի մէջ
կարգապահութիւնը վերականգնելու հա-
մար:

Պէտք է նկատել, որ իրանդական զոր-
քերի բարեկաւրութիւնը կախված կը լինի
լորդերի ժողովից, որ իր յամառութեամբ
կարող է անգոր արձանել կառավարութեան
բոլոր բարի գիտաւորութիւնները: Կար-
տմի և նրա բնկեր միմիստների գլխաւոր
նպատակը այսուհետեւ կը լինի, լորդերի
ժողովի այդ յամառութեան առաջն առ-
նել:

ԻՄԻՆ ԼՈՒԻՆԻ

Անգլիական «Times» լրագիրը հաղորդում է
հետեւեալ թվանշանները երկրագործի վրա գնա-
ված հրէաների մասին: Ընդամենը աշխարհիս
երեկոյն հրէաները 7,000,000 են, որոնցից
2,621,000 բնակվում են Ռուսաստանում,
1,475,000 Աւստրիայում, 572,000 Գերմանիա-
յում, 100,000 Թիւրքիայում, 70,000 Հոլան-
դիայում, 60,000 Անգլիայում, 50,000 Ֆրանսի-
այում, 35,000 Իտալիայում: Անգլիայում հրէ-
աների թիւը հասնում է կէս միլիոնի, իսկ ամ-
բողջ Ասիայում նրանց թիւը 200,000 են, որոնցից
միայն 25 հոգի բնակվում են դեռ իրանց հայրնի-
քում, Պարսկաստանում: Վերջապէս Աֆրիկայում
հրէաները 100,000 թւով են:

Կ. Պոլսից մասնաւոր նամակով հաղորդում են,
որ թիւրքիայի մի հայ երիտասարդ վերջնային
միջոց է գտել կարգաւ բեռնագրերը, որոնք
գտնվում են Հայաստանի աւերակներից: Կտորի
վրա Նոյն մասնաւոր նամակով յայտնում են
իր թէ թիւրքաց կառավարութիւնը մի անգամ
զաղարկեց Վախտ լրագրի հրատարակութե-
նը այդ լրագրի մէջ գետնորթ հայոց թագաւոր-
ների պատկերները վերաբերութեամբ մի յօդու-
ած պատճառով:

«Саратовск. Дневник» լրագիրը ներկայաց-
նում է հետեւեալ պատկեր խօլիմակ քաղաքի
քաղաքային վարչութեան վերջին ընտրութիւն-
ների մասին: Քաղաքապետը Երանդի է
վասիլիւկ, վարչութեան անդամները Մո-
լոցով, Սուլթանիւկ և Շիկին, Առաւելական

պատգամաւոր ու լեւաւ անդամները՝ Կար-
ձեալ Մոլոցով, Շիկին և Սուլթանիւկ, Գ. Նա հա-
տող յանձնագիտող Մոլոցով, Շիկին և
Սուլթանիւկ, Որբերի խնամատար վարչու-
թեանը նախագահ վասիլիւկ, անդամներ Մոլոցով
և Շիկին, Գաղաքային բանի՝ Վիխայով,
վասիլիւկի անդամներ, օգնական և գանձապետ
Կուզմին, վասիլիւկի բոլոր որդին: Արդեօր խօ-
լիմակ քաղաքի այդ գրութիւնը չէ յիշեցնում
մեզ թէ թիւրքեր և թէ մեր միւս քաղաքները:

Մի գող բռնված է և պիտի դատվի հայտա-
բար դատարանում:

Սեղազրված. Պ. դատաւոր, խնդրեմ դործս
յետ գցէք, որովհետեւ իմ փաստաբանս հիւանդ
է և չէ կարող այսօր ներկայանալ:

Գառաւոր. Բայց ի՞նչ կարող է ասել ձեր
աղվոկաւոր, քանի որ ձեզ բռնեցին գողութիւն
անելու ժամանակ:

Սեղազրված. Բանն այն է, որ ես էլ
սաստիկ հետաքրքրվում եմ լսել թէ այդ յիմարը
ինչ ուտեր կը փչի իմ վերաբերութեամբ:

Լսում ենք որ թիւրքաց Հայաստանից 900
հայ ընտանիք գաղթել են դէպի Գարսի նահանգը
և որ կառավարութիւնը կարգադրել է նրանց
տեղ և բնակութիւն տալ Կաղամանի կողմերում:

Գերմանական «Presse» լրագրի Ս. Պետերբուր-
գի թղթակիցը հաղորդում է, որ արդէն հա-
տատ իրողութիւն է, որ Ռուսաստանի մամուլը
ազատված կը լինի վարչական կամայականու-
թեանց և ենթարկված կը լինի դատարաններին:
Բայց արդեօր այդ չնորք կը վայելի միմիստ
մայրաքաղաքի լրագրութիւնը, իսկ գաւառական
մամուլը զրկված կը մնայ այդ նոր իրաւունք-
ներից, այդ մասին ոչինչ չէ հաղորդում թղթա-
կիցը:

Թիֆլիսի հայոց հասարակութիւնը սկսում է
հասկանալ աշխատանքի բաժանութիւնը: Նորե-
րում յօդու հայոց գրքերի հրատարակութեան
ընկերութեան տուած պարահանդէսում այն հա-
յուհիները, որոնք չը գիտէին հայերէն, չեն կա-
րող ոչ գրել հայերէն, ոչ էլ կարող գրվածք, ու-
ղեցին գտնել իրանց ուտեւոր մասնակցել ու-
րիշների գլխի ու ձեռքերի աշխատանքին: Պար
եկոյնների մէջ չըլնում էր խոր մտածունքների
մէջ ընկնված հայոց գնդորդ, նայելով հայու-
հիների գեղեցիկ ոտների վրա երկի մտածում էր
հիւսքան գրականական աշխատանք են պատ-
րաստում իմ բնութեան համար այդ թուղտող
ոտները:

ՄԵՇԼԱՅԻ ՀՆՈՒՄԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի:
«Варж. Вѣд.» լրագիրը լսել է, որ դի-
տաւորութիւն կայ գիւղական վայական-
ների գինը նոր տարուց աւելացնել: Ֆի-
նանսների միմիստութիւնը վճռել է գիւ-
ղական վայականների գինը այժման
գնից 30%-ով բարձրացնել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի: Կա-
ռավարութեան կանոնադրութիւնների և
օրէնքների ժողովածուի մէջ տպված է պե-
տական խորհուրդի բարձրագոյն հաստա-
ված կարծիքը Միմիստիայի իշխանու-
թեան բարձր դատաւարին պատկանող ան-
ձանց մասին: Պետական խորհուրդի կար-
ծիքը վճռել է. Միմիստիայի նախկին իշխա-
նութեան թաւաղներին տալ Ռուսաց Կայ-
սերութեան իշխանական արժանաւորու-
թիւնը, իսկ աղանաւորներին, ազնուական
որժանաւորութիւն: Միմիստիայի թաւաղ-
ներին պատկանող անձանց անուանական և
ընտանեկան ցուցակը պէտք է յանձնել
Կովկասեան Մասնագիտողին քննելու և
Բարձրագոյն հաստատմանը առաջարկելու
համար: Իշխանութեան և ազնուականու-
թեան արժանապատ Միմիստիայի թաւաղ-
ներին և ազնուականներին դատաւորի քու-
թային նախագիւ ազնուականութեան հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի: «То-
посѣ.» լրագիրը հաղորդում է, որ վերջ-
նականապէս որոշված է պոլիցիայի հսկո-
ղութեան տակ եղած անձանց դատաստա-
նին ենթարկելու կարգը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.